

KAREN M. McMANUS

# ONE OF US IS NEXT

ՔԱՐԵՆ ՄԱԿՄԱՆՈՒՍ

# ՄԵԶՆԻՑ ՄԵԿԸ ՀԱՋՈՐԴՆ Է

ՎԵՊ

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Աթաբեկյանի

ԵՐԵՎԱՆ
2021

ՀՏԴ 821.111(73)-31 Մակմանուս
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44
Մ 180

Մ 180 Մակմանուս Քարեն
Մեզնից մեկը հաջորդն է / Ք. Մակմանուս.- Եր.: Newmag, 2024.
- 448 էջ:

Բարի վերադարձ Բեյվյու: Ավագ դպրոցի աշակերտ Սայմոնի մահից հետո քաղաքամերձ ավանը փորձում է անցնել բնականոն կյանքի: Սակայն մղձավանջն անսպասելիորեն վերադառնում է նորովի: Անհայտ մեկն ավագ դպրոցի աշակերտներին ներքաշում է «Քաշում ես կամ քաշվում ես» առցանց խաղին: Ժամերի ընթացքում հաջորդ զոհը պետք է պատասխանի՝ ինչ է ընտրում. ճշմարտությո՞ւնը, որի դեպքում ավագ դպրոցի բոլոր սովորողներն իմանում են խաղացողի ամենամութ և ամոթալի գաղտնիքը, թե՞ փորձությունը, որի դեպքում խաղացողը պետք է կատարի չափազանց վտանգավոր առաջադրանքը: «Մեզնից մեկը ստում է» թրիլլերի շարունակությունում հերոսները պետք է պարզեն՝ իրենցից ով է հաջորդ զոհը:

ՀՏԴ 821.111(73)-31 Մակմանուս
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44

Գլխավոր գործընկեր՝
ԶԱՆԳԱԿ ԳՐԱՏՈՒՆ
zangakbookstore.am

ԶԱՆԳԱԿ
ԳՐԱՏՈՒՆ

ISBN 978-9939-967-41-7
Քարեն Մակմանուս, «Մեզնից մեկը հաջորդն է» © 2024, «ՆյուՄեգ» ՍՊԸ
One of Us is Next © 2020 by Karen M. McManus LLC

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

# Բովանդակություն

Մաս 1 ....................................................11

Մաս 2 .................................................... 237

Երախտագիտության խոսք ..............444

Նվիրում եմ մայրիկիս և հայրիկիս

\+ Edit

# Favorites

| | | |
|---|---|---|
| ՄՌ | **Մեյվ Ռոխաս**<br>Բեյվյուի ավագ դպրոց, Բրոնուինի քույրը | I |
| ՆՄ | **Նոքս Մայերս**<br>Բեյվյուի ավագ դպրոց, «Քանի դեռ ապացուցված չէ» | I |
| ՖԼ | **Ֆիբի Լոթոն**<br>Բեյվյուի ավագ դպրոց, «Քոնտիգո» սրճարան | I |
| ԲՌ | **Բրոնուին Ռոխաս**<br>Բեյվյուի առաջին քառյակից մեկը, Մեյվի քույրը | I |
| ՆՄ | **Նեյթ Մաքոլի**<br>Բեյվյուի առաջին քառյակից մեկը | I |
| ԱՓ | **Ադի Փրենթիս**<br>Բեյվյուի առաջին քառյակից մեկը, «Քոնտիգո» սրճարան | I |
| ԿՔ | **Կուպեր Քլեյ**<br>Բեյվյուի առաջին քառյակից մեկը | I |
| ԼՍ | **Լուիս Սանթոս**<br>Կուպերի լավագույն ընկերը, «Քոնտիգո» սրճարան | I |
| ԷԼ | **Էմմա Լոթոն**<br>Բեյվյուի բարձրդասարանցի, Ֆիբիի քույրը | I |
| ՕԼ | **Օուեն Լոթոն**<br>Ֆիբիի եղբայրը | I |
| ԱՓ | **Աշթոն Փրենթիս**<br>Ադիի քույրը | I |
| ՔՄ | **Քիրսթեն Մայերս**<br>Նոքսի քույրը | I |
| ԷՔ | **Էլի Քլայնֆելթեր**<br>«Քանի դեռ ապացուցված չէ», փաստաբան | I |
| ՋՔ | **Ջուլս Քրանդել**<br>Բեյվյուի ավագ դպրոց, Ֆիբիի լավագույն ընկերը | I |
| ԲՈՒ | **Բրենդոն Ուեբեր**<br>Բեյվյուի ավագ դպրոց, կիսապաշտպան | I |
| ՇՄ | **Շոն Մերդոք**<br>Բեյվյուի ավագ դպրոց, բեյսբոլ խաղացող | I |

# ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Ուրբաթ, մարտի 6

**ԹՂԹԱԿԻՑ** (կանգնած է ոլորապտույտ փողոցի եզրին, թիկունքում սպիտակ ծեփածածկ խոշոր շինություն է) – Բարի լույս: Ձեզ հետ է Լիզ Ռոուզենը 7-րդ ալիքի լուրերից: Ուղիղ հեռարձակում եմ իրականացնում Բեյվյուի ավագ դպրոցից, որտեղ աշակերտները երեկ ցնցված էին դասընկերներից մեկի կորստից: Վերջին 18 ամիսներին սա դեռահասի երկրորդ ողբերգական մահն է այս փոքրիկ քաղաքում, և բնակիչներին համակել է դեժավյուի ծանր զգացումը:

*(Կադրում հայտնվում է երկու աղջիկ. մեկը սրբում է արցունքները, մյուսի դեմքը քարացած է):*

**ԱՐՏԱՍՎՈՂ ԱՂՋԻԿ** - Ուղղակի... իսկապես շատ տխուր է: Մեկ-մեկ թվում է՝ Բեյվյուն անիծված է, գիտեք: Սկզբում՝ Սայմոնը, հիմա էլ՝ սա:

**ՔԱՐԱՑԱԾ ԴԵՄՔՈՎ ԱՂՋԻԿ** - Սա բոլորովին նման չէր Սայմոնի դեպքին:

**ԹՂԹԱԿԻՑ** (բարձրախոսը մոտեցնում է արտասվող աղջըկան) - Մտերի՞մ էիք մահացածի հետ:

**ԱՐՏԱՍՎՈՂ ԱՂՋԻԿ** - Չեմ ասի, թե *շատ մոտ* էինք: Ընդհանրապես մոտ չէինք: Ես այստեղ նորեկ եմ:

**ԹՂԹԱԿԻՑ** (դիմում է մյուս աղջկան) - Իսկ Դո՞ւք:

**ՔԱՐԱՑԱԾ ԴԵՄՔՈՎ ԱՂՋԻԿ** - Մենք պարտավոր չենք խոսել Ձեզ հետ:

Տասը շաբաթ առաջ

**Reddit, «Վրեժխնդրությունն իմն է» ենթաֆորում**
**Թեման բացել է Բեյվյու2020-ը**

Ողջույն:
Սա էն խո՞ւմբն է, որտեղ Սայմոն Քելեհերը հրապարակումներ էր անում: — Բեյվյու2020

Բարևներ:
Ինքն է, որ կա: — Մթին միտք

Ինչո՞ւ եք տեղափոխվել: Ու ինչո՞ւ էստեղ համարյա ոչ ոք չի գրում: — Բեյվյու2020

Հին կայքում ինչքան տխմար ու լրագրող ասես կար: Հիմա անվտանգության նոր միջոցներ ունենք: Մեր ընկեր Սայմոնը լավ դաս տվեց: Դատելով քո օգտանունից՝ ճանաչում ես նրան: — Մթին միտք

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark